

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՖԱԴԵՅ Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հոկտեմբերի 31-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Հայոց Հայրապետը Երևանում այցելեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Տ. Սարգսյանին:

Հայոց Հայրապետի և Հայաստանի հանրապետության մեծահարգ վարչապետի միջև տեղի ունեցավ զրույց՝ հոկտեմբեր ամսի առաջին տասնօրյակում Լիբանանում ստեղծված տխուր կացության և այդ իրադրության հետևանքով հայ եկեղեցու և հավատացյալների կրած մարդկային և տնտեսական ծանր կորուստների մասին:

Զրույցի ընթացքում, որին մասնակցում էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը, Հայաստանի հանրապետության մեծահարգ պարոն վարչապետը, հանուն Հայաստանի կառավարության, Հայոց Հայրապետին վստահեցրեց, որ հայրենի բարեխնամ կառավարությունը բարոյական ու նյութական ամեն աջակցություն ցույց կտա լիբանանահայ աղետյալներին:

Զրույցի վերջում Հայոց Հայրապետը ջերմ շնորհակալություն հայտնեց հայրենի կառավարությանը՝ լիբանանահայ աղետյալների նկատմամբ ցույց տրվելիք աջակցության համար: